



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 նոյեմբերի 2020 թվականի թիվ 136-Ա

ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 32-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի և ձևը՝ համաձայն Ձև N 1-ի:

2. Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

02 նոյեմբերի 2020թ.
ք. Երևան

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Մույն կարգը սահմանում է Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացման կարգի, Հաշվետվության լրացման ձևի հետ կապված հարաբերությունները:
2. Մույն կարգի դրույթներին համապատասխան Հաշվետվությունը լրացվում է յուրաքանչյուր Հանրային Հեռարձակողի կողմից՝ Հաշվետվության Ձև N 1-ի համապատասխան: Հանրային հեռարձակողը Հաշվետվությունը ներկայացնում է Հանրային հեռարձակողի խորհուրդ:
3. Հաշվետվություն(ներ)ը Հանրային հեռարձակողի խորհուրդը ներկայացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով:
4. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից Հաշվետվությունը ներկայացվում է եռամսյա կտրվածքով՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը:
5. Հաշվետվություն(ներ)ը ներկայացվում են թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Եթե ներկայացված գրավոր և էլեկտրոնային տարբերակների միջև կա անհամապատասխանություն, հիմք է ընդունվում գրավոր տարբերակը:
6. Հանրային հեռարձակողի կողմից Հաշվետվությունը լրացվում է Հաշվետվության N 1 Ձևի համաձայն, Հաշվետվությունը վարելու հետևյալ ուղեցույցով՝
 - 1) «Տեսալսողական հաղորդում(ներ)ի անվանումները» սյունակում լրացվում է տեսալսողական հաղորդման անվանումը՝ տեսալսողական հաղորդման թեմատիկ ուղղվածությանը համապատասխան, իսկ ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի մասին հաղորդումների դեպքում նշում է կատարվում նաև դրա մասին,

2) «Տեսալսողական հաղորդում(ներ)ի եթերաժամերը» սյունակում լրացվում է տեսալսողական հաղորդման հեռարձակման (վերահաղորդման) սկսվելու և ավարտվելու ժամերը, տեսալսողական հաղորդման տևողությունը,

3) «Տեսալսողական հաղորդում(ներ)ի հակիրճ նկարագրությունը» սյունակում լրացվում է տեսալսողական հաղորդման մասին հակիրճ տեղեկատվություն՝ համառոտ շարադրանք՝ մի քանի էական և առանձնահատուկ հատկանիշներ, որոնք բնորոշում են տվյալ տեսալսողական հաղորդումը,

4) «Հաղորդում(ներ)ի քանակը և ըստ տոկոսային արտահայտությամբ» սյունակում ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանում յուրաքանչյուր ուղղվածության տեսալսողական հաղորդումների քանակը, ինչպես նաև հեռարձակվող ընդհանուր տեսալսողական հաղորդումների նկատմամբ տվյալ թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների տոկոսային հարաբերակցության թիվը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ N 1

**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ
 ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ
 ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ներկայացվում է համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի	
Հաշվետվության ներկայացման ժամկետը՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը	
Ներկայացնում է _____ (Հանրային հեռարձակողի անվանումը)	
Գտնվելու վայրը _____	
Հեռախոսահամար(ներ) _____	
Էլեկտրոնային փոստ _____@_____	

Հ/Հ	Տեսալսողական հաղորդում(ներ)ի ուղղվածությունը	Տեսալսողական հաղորդում(ներ)ի անվանումները	Տեսալսողական հաղորդում(ներ)ի եթերաժամերը	Տեսալսողական հաղորդում(ներ)ի հակիրճ նկարագրությունը	Տեսալսողական հաղորդում(ներ)ի թվաքանակը և ըստ ընդհանուր հաղորդումների տոկոսային արտահայտությամբ
1.	Տեղեկատվական				
2.	Կրթական				
3.	Մշակութային				
4.	Ժամանցային				

տնօրեն՝

_____ (Ազգանուն, անուն)

_____ (Ստորագրություն)

Գ.Տ.

Լրացնող (լիազորված անձ)

_____ (Ազգանուն, անուն)

_____ (Ստորագրություն)